

Առողջության և անվտանգության վերաբերյալ հաճախակի տրվող հարցեր ԲԴՄԾ-ի ծնողների և աշակերտների համար

Հունիս ամիսից ի վեր, ԲԴՄԾ-ն պլանավորում է դպրոցները վերաբացելու առողջության և անվտանգության ընթացակարգերը: Մենք շատ ուրախ ենք, որ կարողանում են աշակերտներին և աշխատակիցներին վերադարձնել դպրոց 2021 թվականի ապրիլի 12-ին: Խնդրում ենք սեղմել այս հղումը ԲԴՄԾ-ի Covid-19 կանխարգելման ծրագրի հետ ծանոթանալու համար <https://www.burbankusd.org/Page/3282>: Յուրաքանչյուր դպրոց ունի Covid-19-ի համապատասխանության թիմ, Covid-19-ի ծրագիր (օգտվել դպրոցի կայքէջից) և սահմանում է իր առողջական ստուգումները, ֆիզիկական հեռավորության պահպանումը, ձեռքերի լվանալու հիշեցումները, դիմակի կրելը և առողջապահական և անվտանգության այլ ռեժիմներ: Բացի այդ, դպրոցների մեծ մասն առնվազն մեկ ստուգում է անցել Լոս Անջելեսի հանրային առողջապահական գրասենյակի, ինչպես նաև մեր շրջանի շինությունների, ուսնողական և առողջապահական ծառայությունների կողմից: Բուժքույրերը և առողջապահական օգնականները նույնպես օգնում են ձևակերպել առողջապահության և անվտանգության ընթացակարգերը: Ահա Լոս Անջելեսի հանրային առողջապահության և անվտանգության Մ-12-րդ դասարանների վերաբացման վերաբերյալ տեղեկություն պարունակող կայքէջը: Խնդրում ենք, որ նշել, որ այն հաճախակի թարմացվում է: http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/protocols/reopening_K12schools.pdf

1. Ե՞րբ է ԲԴՄԾ-ն բացելու դպրոցներն անձամբ հաճախելու համար:

Բոլոր դասարանների համար, դպրոցները կբացվեն 2021 թվականի ապրիլի 12-ին: Ծնողները, հարցաթերթիկի միջոցով, ընտրել են հիբրիդ մոդելը կամ միայն հեռակա ուսուցման մոդելը: Հարցաթերթիկին չպատասխանողները կմնան հեռակա ուսուցման մոդելում:

2. Ինչպիսի՞ն է լինելու դասացուցակը:

Դասացուցակն ու ուսուցիչը կմնան նույնը: Առավոտյան աշակերտները կշարունակեն ուսումը հեռակա ուսուցման և ուսուցիչների հետ ուղիղ եթերի դասերի միջոցով (synchronous): Աշակերտները կբաժանվեն հերթափոխների (խմբերի): Ա հերթափոխն անձամբ կհաճախի դպրոց երկուշաբթի և երեքշաբթի օրերին՝ կեսօրից հետո: Բ հերթափոխը՝ չորեքշաբթի և հինգշաբթի օրերին՝ կեսօրից հետո: Ծնողները կարող են ընտրել, որ երեխան շարունակի ուսումը հեռակա եղանակով, ինչպես նշել էին գարնանային արձակուրդներից առաջ: Ուրբաթ օրերին, բոլոր աշակերտները կշարունակեն ուսումը համացանցային կարգով (asynchronous):

*Այլընտրանքային կրթության ծրագրի դասացուցակը տարբեր կլինի, քանի որ այն կախված է դպրոցի չափից և դասարաններում աշակերտների թվից:

3. Ինչպիսի՞ն է լինելու կեսօրից հետո տեղի ունեցող դասավանդումը:

Դասարաններից մեծամասնությունը կազմված կլինի 14 աշակերտից: Ուսուցիչներն աջակցություն և միջամտություն կհատկացնեն: Նրանք կաշխատեն նաև, աշակերտներին հատկացնել սոցիալ հուզական դասեր:

* Այլընտրանքային կրթության ծրագրի դասացուցակը տարբեր կլինի, քանի որ այն կախված է դպրոցի չափից և դասարաններում աշակերտների թվից:

4. **Կարո՞ղ է աշակերտը միտքը փոխել և միայն հեռակա ուսուցումից անցնել հիբրիդ մոդելի:**

ԲԴՄՇ-ն կաշխատի ընտանիքների հետ նրանց պահանջը կատարելու համար:

Այնուամենայնիվ, խնդրում ենք հիշել, որ պետք է պահպանել ֆիզիկական հեռավորություն և ցուցաբերել ուսումնական հետևողականություն: Խնդրում ենք դիմել դպրոցի աղմինիստրատորին, եթե ցանկանում եք փոփոխել մոդելը դպրոցները բացվելուց հետո: Եթե փոփոխությունը հաստատվի, ապա այն չի կարող նորից փոփոխվել:

5. **Ինչպե՞ս և որտեղի՞ց են աշակերտները մտնելու դպրոց:**

Յուրաքանչյուր դպրոց պետք է մշակի ելքի ու մուտքի իր ծրագիրը՝ կախված դպրոցի նախագծից, աշակերտների թվից և հասունությունից, աշխատակիցներից: Ծնողներն ու աշակերտները պետք է առցանց առողջապահական Գուգլ փաստաթուղթ լրացնեն դպրոց ժամանելուց առաջ: Ծնողները և աշակերտները կարող են լրացված փաստաթղթի պատճեն ցույց տալ հեռախոսի էկրանի վրա դպրոց մտնելուց առաջ կամ կարող են բանավոր լրացնել այն աշխատակցի հետ, եթե հեռախոս չունեն: Կչափվի նաև ջերմությունը: Ծնողները չեն կարող դպրոց մտնել: Տարրական դպրոցի ծնողները կարող են աշակերտներին տանել նշանակված մուտքի դռան մոտ՝ ջերմությունը չափելու և ստուգում կատարելու համար: Յուրաքանչյուր դպրոց նշանակելու և իրագործելու է մուտքի և ելքի իր ընթացակարգերը:

Միջնակարգ դպրոցի աշակերտները պետք է դպրոց մտնեն նշանակված մուտքի դռնից և առողջական ստուգման ապացույց ցույց տան հեռախոսի էկրանի վրա կամ բանավոր ստուգում կատարեն: Կչափվի նաև նրանց ջերմությունը դպրոց մտնելուց առաջ և պետք է միանգամից գնան իրենց դասասենյակ և դուրս գան դպրոցից նույն դռնից:

Աշակերտները պետք է դպրոց ժամանեն դասերը սկսվելուց 15 րոպեից ոչ շուտ և պետք է հեռանան դպրոցից գանգը հնչելու պես: Աշակերտներին թույլ չի տրվի 15 րոպեից ավել սպասել ծնողներին և չի կարող վերահսկել նրանց դասերից հետո: Խնդրում ենք երեխաներին ժամանակին վերցնել դպրոցից կամ ուղարկել երեխաների խնամքի կենտրոն:

6. **Հարկավո՞ր է, իր աշակերտները և աշխատակիցները իրարից 6 ոտքաչափ հեռավորություն պահպանեն: Չի՞ փոփոխվել այդ պահանջը 3 ոտքաչափի Վարակի դեկավարման կենտրոնի կողմից:**

Մենք կշարունակենք քաջալերել ֆիզիկական հեռավորության պահպանում: Այնուամենայնիվ, քանի որ Լոս Անջելեսի գավառում վարակի տարածումը շատ բարձր մակարդակի վրա չէ, դրա համար աշակերտների համար այն նվազել է 3 ոտքաչափի առանց հերթափոխի: «Միջանկյալ և միջնակարգ դպրոցներում, Վարակի կառավարման կենտրոնն առաջարկում է դասասենյակում աշակերտների 3 ոտքաչափ հեռավորության պահպանում, որտեղ դիմակ կրելը համընդհանուր է և այն համայնքներում, որտեղ վարակի փոխանցումը ցածր է, չափավոր կամ էական»: Հանրային առողջապահությունը քաջալերում է չափահասներին ինչքան հնարավոր է ֆիզիկական հեռավորություն պահպանել: Աշակերտները կնստեն իրարից հեռու տեղադրված նստարաններին: Նրանք կնստեն մեկ ու մեջ շարքերում և հայացքը կուղղեն նույն ուղղությամբ: Կլոր կամ լոբաձև սեղաններ ունեցող դասասենյակներում կօգտագործվեն միջնորմներ՝ կախված աշակերտների թվից: Դասասեղանները կմաքրվեն ամեն օր հերթափոխների արանքում: Դպրոցներն օգտվում են տեսողական նշաններից

(շրջանակներ, տարբերանշաններ, նշաններ, ուղղորդված սլաքներ) աշակերտներին հիշեցնելու համար, թե որ ուղղությամբ շարժվեն, որոնք են մուտքի և ելքի դռները և ֆիզիկական հեռավորության պահպանման վերաբերյալ:

7. **Բաց է լինելու դպրոցը և գրասենյակը ծնողների և այլցելուների համար:**

Ոչ: Խնդրում ենք շարունակել հեռախոսագանգի կամ էլեկտրոնային նամակի միջոցով կապ հաստատել դպրոցի կամ աշխատակիցների հետ, եթե ոչ մի արտակարգ իրավիճակ չկա: Ժամադրություն վերցնելը պարտադիր է:

8. **Ինչպես են աշակերտները ժամանակին լվանալու ձեռքերը:**

Մենք միշտ քաջալերում ենք աշակերտներին հետևել հիգիենայի կանոններին: Քանի որ քիչ քանակով աշակերտներ կան դասասենյակում, կարող է ուսուցիչը ձեռքերը լվանալու կանոնավոր ռեժիմ սահմանել: Եթե ոչ, աշակերտները կարող են օգտվել ձեռքերի ախտահանիչ լուծույթից, որը առկա է դասասենյակներում:

9. **Որո՞՞նք են ԲԴՄՇ-ի դիմակ կերլու օրենքները:**

Ըստ Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական հրահանգների դիմակ կրելը պարտադիր է: Աշակերտները կարող են կրել իրենց դիմակը, եթե այն համապատասխանում է չափանիշների հետ (երկշերտ և պիրկ գրկած): Աշակերտները չեն կարող գլխաշորով կամ շարֆով ծածկել դեմքը: Եթե աշակերտը կամ աշխատակիցը դիմակ չունի, ապա այն կհատկացվի: Եթե աշակերտը դժվարանում է դիմակ կրել, ապա ուսուցիչը և/կամ աղմինիստրատորը կարող է աջակցել նրան և ցույց տալ, թե ինչպես պետք է ճիշտ կերպ կրել այն: Եթե աշակերտը չի ենթարկվում և հրաժարվում է դիմակ կրել, ապա այն կենթարկվի կարգապահական գործողության: Ահա օրենքների հղումը.

<https://www.burbankusd.org/Page/3284>

10. **Ի՞նչ է լինելու այն աշակերտների հետ, ովքեր հատուկ կարիքների կամ առողջական խնդիրների պատճառով, չեն կարող դիմակ կրել:**

Հատուկ ուսուցման բաժինն արդեն հաշվի է առել այն աշակերտներին, ովքեր հարմարությունների կարիք կզգան և աշխատել է դպրոցի աղմինիստրացիայի հետ պլան մշակելու համար: Այս խմբին պատկանող աշակերտների թիվը շատ ցածր է, բայց եթե որևէ հարց ունեք խնդրում ենք դիմել դպրոցի աղմինիստրացիային կամ հատուկ ուսուցման թիմին: Խնդրում ենք ծանոթանալ հատուկ ուսուցման աշակերտների կամ առողջական խնդիրներ ունեցող աշակերտների դիմակ կրելու ընթացակարգերի հետ: Ահա հղումը.

<https://www.burbankusd.org/Page/3284>

11. **Կարո՞ղ են աշակերտները դեմքի վահան կրել:**

Այո, բայց պետք է նաև կրել դիմակ վահանի տակից:

12. **Պահանջվում է՞ ստուգում անցել դպրոց ժամանելուց առաջ: Չափե՞լ ջերմությունը:**

Այո, մենք քաջալերում ենք ծնողներին լրացնել առցանց Գուգլ առողջապահական հարցաթերթիկը դպրոց ժամանելուց առաջ կամ անցնել բանավոր ստուգում: Ծնողները կամ աշակերտները (տարրական դպրոցում՝ ծնողները) կներկայացնեն Գուգլ առողջապահական

հարցաթերթիկը կամ դպրոց մտնելուց առաջ այն կարող են անել բանավոր կերպ՝ աշխատակցի հետ: Կչափվի նաև նրանց ջերմությունը: Կօզովենք ձեռքի շարժական և/կամ անշարժ ջերմաչափներից: Աշխատակիցները կշարունակեն առողջապահական ստուգում կատարել առցանց Գուգլ փաստաթղթի կամ դպրոցում՝ թղթի օրինակների միջոցով:

13. Պահանջվում է ուսուցիչներից և աշխատակիցներից պատվաստանյութ ստանալ:

Covid-19-ի պատվաստանյութ ստանալը պարտադիր չէ աշխատանքի ներկայանալու համար: Մենք տարբեր կլինիկաների, ինչպես նաև ԲԴՄՇ-ի կողմից հատկացված կլինիկաների հղում ենք ուղարկել մեր աշխատակիցների համար: Աշխատակիցները բազմաթիվ հնարավորություններ են ունեցել պատվաստանյութ ստանալու համար: Մեր ուսուցիչներից և աշխատակիցներից շատերը ստացել են պատվաստանյութ: Պատվաստանյութ ստանալը պահվում է գաղտնի:

14. Պահանջվում է աշակերտներից պատվաստանյութ ստանալ:

Covid-19-ի պատվաստանյութ ստանալ դեռ չի պահանջվում: Ներկայումս, պատվաստանյութը հաստատված է 16-ից ավել տարիք ունեցող անձանց համար, իսկ Ֆայզեր ընկերությունը դեռ մշակում է պատվաստանյութ 14 տարեկանների համար: Երեխաների համար հաստատված պատվաստանյութի հավաստագրում կատարելը շատ դժվար և երկար գործընթաց է: Երեխաներին պատվաստումը առաջնորդվելու է Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի և Վարակի ղեկավարման կենտրոնի միջոցով: Պատվաստանյութի տեղեկությունը պահվում է գաղտնի:

15. Ի՞նչ ծրագրեր ունեք աշակերտների և աշխատակիցների Covid-19-ի քննություն անցկացնելու վերաբերյալ:

ԲԴՄՇ-ն քննույթուն անցկացնելու ոչ մի ծրագիր չունի: Այն չի պահանջվում Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահության գրասենյակի կողմից, այն դպրոցների համար, որոնք գտնվում են կարմիր մակարդակում կամ ավելի քիչ վարակված ունեցող գավառներում: Եթե որևէ աշխատակից կամ աշակերտ դրական քննական արդյունք ստանա, ապա մենք Covid-19-ի քննության ռեսուրսներ կհատկացնենք: Մակարդակների գույները կարող են փոփոխվել, դրա պատճառով խնդրում ենք հյուրընկալել Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի կայքէջը: <http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/data/index.htm>

16. Որո՞նք են դպրոցը մաքրելու առօրյա ընթացակարգերը:

Մաքրությունը կկատարվի հերթափոխների արանքում և օրվա վերջին: Շինությունների բաժինը մաքրման և ախտահանման լրացուցիչ սարքեր է գնել, որոնցից են պայուսակների ախտահանիչները և այլ մաքրող նյութերը: Բարձր հաճախականության շփման մակերեսները հաճախակի կմաքրվեն: Դպրոցի հավաքարարները արդեն պատրաստվածություն են անցել: Նրանք ստուգաթերթիկի օգնությամբ կնշեն, թե որ սենյակներն են մաքրել: Ահա առօրյա մաքրության հրահանգների հղումը. <https://www.burbankusd.org/Page/3300>

17. Ի՞նչ պարագաներ ունեն ուսուցիչները դասասենյակներում:

ԲԴՄՇ-ն դիմակներ, ձեռնոցներ, ձեռքի ախտահանիչներ, թաց անձեռոցիկներ, միջնորմներ, որտեղ անհրաժեշտ էր, նշաններ, շշի լցակայաններ (փոխարինել են խմելու ջրի շատրվաններին) է հատկացրել, ինչպես նաև լրացուցիչ սարքեր՝ բուժքույրերի և հատուկ ուսուցման դասասենյակների համար: Խնդրում ենք երեխայի հետ շիշ ուղարկել, որը հնարավոր կլինի լցնել ջրով (վրան անունը և ազգանունը գրված), քանի որ ջրի շատրվանները փոխարինվել են ջրի լցակայաններով:

18. **Կարո՞ղ են աշակերտները և աշխատակազմը օգնել մաքրել դասասենյակները:**

Այո, մենք կաշխատենք իրար հետ մեր դպրոցները, դասասենյակները և շինությունները մաքուր պահելու համար: Տարիքով ավելի մեծ աշակերտներին կխնդրենք օգնել, բայց նրանց մասնակցությունը կլինի խիստ կամավոր:

19. **Կմաքրվե՞ն գուգարաններն ավելի հաճախակի:**

Այո, խնդրում ենք օգտվել 16-րդ համարի հարցում տեղադրված առօրյա մաքրման հրահանգների հղումից: Յուրաքանչյուր դպրոց ծրագիր է մշակել նաև գուգարաններում ֆիզիկական հեռավորության պահպանման (ֆիզիկական հեռավորության նշաններ, որոշ լվացարանների օգտագործման արգելում և քիչ քանակով աշակերտների մուտք) համար:

20. **Փոխարինվե՞լ են օդի զտիչները:**

Հեռակա ուսուցման ընթացքում, շինությունների մեր բաժինը ջանասիրաբար աշխատում էր շենքերի և դասասենյակների զտիչները MERV13-ով փոխարինելով: Բոլոր դպրոցներն ունեն ERV13 զտիչներ, որոնք բարձրորակ զտիչներ են օդափոխության համար:

21. **Ունի՞ արդյոք ԲԴՄՇ-ն անձնական պաշտպանության սարքեր (PPE) իր դպրոցներում:**

ԲԴՄՇ-ն գնել է դիմակներ, ձեռնոցներ, միջնորմներ (որտեղ անհրաժեշտ է) նշաններ, խմելու ջրի լցակայաններ (փոխարինել է ջրի շատրվաններին) և լրացուցիչ սարքեր բուժքույրերի համար: Դպրոցներն անհրաժեշտ պաշարներ ունեն և կարող են ավելին պահանջել:

22. **Կարո՞ղ են աշակերտներն օգտվել խաղահրապարակի սարքավորումներից:**

Այո, քանի դեռ այն ամեն օր կմաքրվի: Խաղահրապարակի սարքավորումներից օգտվելիս, աշակերտները պետք է լվանան իրենց ձեռքերը, օգտվեն ձեռքի ախտահանիչից և պահպանեն ֆիզիկական հեռավորություն:

23. **Կարո՞ղ են աշակերտները օգտվել նույն գրենական պիտույքներից:**

Ամեն հնարավոր դեպքում, աշակերտները պետք է օգտվեն իրենց գրենական պիտույքներից: Եթե այդ պիտույքները պետք է օգտագործվի մի քանի աշակերտի կողմից, օրինակ մաթեմատիկայում կիրառվող փոքրի իրերը, ուսուցիչները, աշխատակազմը և աշակերտները կարող են մաքրել դրանք յուրաքանչյուր օգտագործումից հետո:

24. **Ո՞վ է վերահսկելու երեխաներին, ֆիզիկական հեռավորության պահպանմանը և առողջապահական ու անվտանգության ընթացակարգերին:**

Բոլորն էլ ունեն իրենց դերը առողջապահական և անվտանգության ընթացակարգերին հետևելու գործում: Մենք քաջալերում ենք կրթական համայնքի բոլոր անդամներին օգնել վերահսկել առողջապահական և անվտանգության ընթացակարգերին: Խնդրում ենք օգնել մեզ

և հիշեցնել երեխաներին պահպանել 3-6 ոտքաչափ ֆիզիկական հեռավորություն և դիմակ կրել: Եթե նրանց մի փոքր դադար է հարկավոր դիմակը հանելու համար, նրանք կաշխատեն ուսուցչի և աշխատակիցների հետ այն կատարելու համար:

25. Ինչպե՞ս է կատարվելու ներկա-բացակայի գործընթացը: (TBD)

26. Եթե աշակերտը դպրոց է հաճախում հիբրիդ մոդելով և բացակայում է կեսօրից հետո տեղի ունեցող դասընթացի ընթացքում, ապա բացակա կստանա, թե՞ կեսօրից հետո ներկա գտնվելը կամավոր է:

Աշակերտները պետք է ներկա գտնվեն կամ համացանցային (asynchronous learning) դասերի ընթացքում կամ անձամբ կեսօրից հետո տեղի ունեցող դասընթացին: Աշակերտները պետք է կանոնավոր կերպ անձամբ ներկա գտնվեն դասընթացին, եթե այլընտրանքային ծրագիր չի մշակված ըստ նրա IEP, 504 պլանի կամ անհատական ծրագրի դպրոցի խորհրդատուի կամ ադմինիստրատորի կողմից: Դասերից բացակայելու մտահոգությունները կքննարկվեն դպրոցի և ուսանողական ծառայությունների բաժնի կողմից՝ նահանգային պարտադիր ուսուցման օրենքի համաձայն:

27. Ի՞նչ կլինի, եթե աշակերտն ախտանշաններ ունեն, ստանա քննության դրական արդյունք, ընտանիքի անդամները ստանան Կորոնավիրուսի քննության դրական արդյունք:

Հիվանդ երեխաներին կամ Կորոնավիրուսի ախտանշաններ ունեցող երեխաներին պետք է պահել տանը: Ծնողները պետք է ամեն օր առողջական ստուգում անցկացնեն երեխային դպրոց ուղարկելուց առաջ: Եթե աշակերտի ախտանշանները սկսեն դպրոցում, ապա ԲԴՄՇ-ն կհետևի հանրային առողջապահության հրամաններին: Ծնողները պետք է անմիջապես տուն տանեն երեխային: Խնդրում ենք համոզվել, որ երեխային տուն տանող կա: Խնդրում ենք սեղմել տրված հղումը և ծանոթանալ դպրոցի բուժքրոջ ներկայացման հետ, որը հիմնված է Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի (LADPH) հրամանների վրա: Բուժքույրերը, առողջապահական օգնականները և ադմինիստրատորները, տարվա ընթացքում, հետևել են վարակված անձանց հետ շփվելը ղեկավարելու հրահանգներին երեխաների խնամքի կենտրոնի, աշխատակիցների և հերթափոխների համար:

28. Եթե պատվաստանյութ ստացած անձը շփվել է Covid-19-ով վարակված անձի հետ կամ ախտանշաններ ունի, պետք է՞ որ նա մեկուսացվի:

Ըստ Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի՝ ոչ, եթե անձի լրիվ պատվաստանյութ ստանալուց հետո անցել է 14 օր և ոչ մի ախտանշան չունի: Խնդրում ենք սեղմել տրված հղումը, որը ներկայացված է առողջապահական մեր աշխատակազմի կողմից:

29. Ինչպե՞ս է ԲԴՄՇ-ն գտնելու, թե ու՞մ հետ են շփվել այն անձիք, ովքեր ստացել են քննական դրական արդյունք:

Մենք հետևելու ենք Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի հրահանգներին և զեկուցում վարակված անձանց: Եթե աշակերտը դրական արդյունք է ստանում կամ մեկուսացել է Covid-19-ի պատճառով, ապա ծնողները ծանուցում կստանան: ԲԴՄՇ-ն չի հայտնի աշակերտի ինքնությունը, բայց դուք կտեղեկանաք, եթե ձեր երեխան շփվել

է վարակված անձի հետ և ինչ քայլեր պետք է ձեռնարկել: Խնդրում ենք օգտվել շրջանի Covid-19-ի վահանակից. https://drive.google.com/file/d/1Cpid6UbkySPwKLAmlw_65rVmJtqAXJM/view և Covid-19-ի ղեկավարման պլանից <https://www.burbankusd.org/Page/3080>

30. Ի՞նչ խորհուրդներ եք տալիս ճանապարհորդությունից վերադարձած անձանց:
Ներկայումս, եթե ճանապարհորդում եք նահանգի կամ երկրի սահմաններից դուրս կամ տնից 120 մղոն հեռու, ապա պետք է մեկուսանաք 10 օրվա ընթացքում ըստ` Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի հրահանգների: Խնդրում ենք շարունակել վերանայել այդ հրահանգները ճանապարհորդելուց առաջ:
<http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/data/index.htm>
31. Ի՞նչ պետք է անել, եթե առողջական կամ անվտանգության կանոնների խախտում նկատեմ:
Դիմել դպրոցի ադմինիստրատորին: Կարող եք նաև էլեկտրոնային փոստով նամակ ուղարկել Ստեյսի Քաշմանին stacycashman@burbankusd.org հասցեով: Կարող եք նաև հյուրընկալել ԲԴՄՇ-ի կայքէջը դպրոցը վերաբացվելու, ռեսուսների և Covid-19-ի հանրային առողջապահության և անվտանգության հրահանգների հետ ծանոթանալու համար: